ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» 2019 թվականի հունիսի 27-ի ՀՕ-65-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «հաշմանդամ» բառից հետո լրացնել «, որի հաշմանդամության խումբը սահմանվել է անժամկետ» բառերը:

Հոդված 2. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 5-րդ և 6-րդ մասերում «2020 թվականի» բառերը փոխարինել «2021 թվականի» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մաս.

«6.1. 2022 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում և սույն հոդվածի 2-րդ մասում նշված՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձանց համար՝

1) սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված սոցիալական վճարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

աշխատավարձի ամսական չափը	սոցիալական վճարի չափը՝ հաշվարկված աշխատավարձի նկատմամբ
մինչև 500 000 ՀՀ դրամը ներառյալ	3,5 տոկոսը
500 000-ից ավելի ՀՀ դրամ	10 տոկոսի և 32 500 ՀՀ դրամի տարբերության չափով

2) կատարվող կուտակային հատկացումների և այդ անձանց եկամուտներից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարի տարբերությունը չի կարող գերազանցել ամսական 32 500 ՀՀ դրամը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**